ձվալար. և ունի 300 ծածկուխաւոր չէնք։ Այս գործարանին մէջ կան 730 պաշտօնաւորք և 1600 գործաւորք։ Տարուան մը մէջ կը սպառէ 500,000 տակառաչափ հանքածուխ և 125,000 տակառաչափ քոք, 113 միլիոն խորանարդ ոտք ջուր, 115,000,000 խորանարդ ոտք լուսաւորութեան կազ։ Այլ և այլ գործարաններն իրարու հետ հաղորդակցելու համար երկաթուղիներ ունի, որոնց բոլորական երկայնութիւնն է 7 գերմանական մղոն. անոնց վրայ կ'երթեւեկեն 3 շոգեշարժ կառք և 270 վագոնք։ Հեռագրական 30 կայարանք կան, որոնք իրարու հետ հաղորդակցութիւն ունին։ Կը հրսկեն գունդ մը պահապան զօրագ 160 հոգի և 70 ջրհանակիրք։ Պանդոկ մը, գարեջուր խմողաց երեք ժողովատեղի, ջրաղացք մը, շոգեշարժ հացանոց մը կը հայթայթեն այն ճարտարարուեստ բազմութեան սիրտ ու ջիքը։ Պաշտօնաւորք ունին 206 բնակարանք և գործաւորք 2848 բնակարանք. հիւանդանոց մը՝ 100 անկողնօք և զգուշարան մը՝ 120 անկողնօք։

Կայ նաև ծաղկեալ արիզ մը ապահովագրութեան, քիմիական գործարան մը, լուսագրատուն և տպարան մը։

Հանքային տնտեսութիւնը կը բանեցունէ 414 հանք, որոնց մակերեսային ունի 80,000 ձվալար, և որոնցմէ կ'ելլէ ամէն ամիս 10 միլիոն քիլոկրամ չգործուած երկաթ։

Գոնուբ կը բանեցունէ նաև չատ մը հանք Սպանիոյ հիւսիսային կողմերը, և տարուն տարի կը ստանայ անոնցմէ 300,000 տակառաչափ չգործուած երկաթ։

ԼԵՒՈՒՆ ՂԱԻ

Սպանիոյ Գասթոնա քաղաքէն քառորդ մը հեռու, գետաղնիոյ մէջ, ապի լճակ մը կայ, բարձր իրր 150 մէտր, չրջապատը 5 քիլոմէտր, իսկ կ'ունենայ տակն որշափ խոր երթալն ինչուան հիմա չէ գտնուած։ Այնչատակ ժամանակներէ ի վեր այս լճերան գալիք տարբերութիւն մը անձրեւները տուած չըլլալուն համար տեղացիք կը կարծեն որ անսպառելի ըլլայ։

Ղաղ կարմրորակ է, երկաթի օքսիտներուն դունով. տեղ տեղ կարծրանալու, տեղ տեղ ալ ապականելու։ Մեծ ջանքով կը բանեցուի այս ազահանքը, մանաւանդ 1870 Թուականէն ետև, երբ աղի մենաւաճառութիւնը վերցուեցաւ բոլոր Սպանիոյ մէջ։

Այս ազահանքին տէրն է Մէտինա-Զէլի անունով գործիր, որ հիմա քառասուն գործաւոր կը բանեցունէ. որոնք օրը քառասուն մեծ տակառ աղ կը հանեն, ոչ թէ ուրիշ ազահանքաց նման գետնին տակն աշխատելով, այլ բաց երկրնքի տակ, ինչպէս թէ աւերակի մը մէջէն հողերն ու քարերն հանէին։

Բիւրեղացած քարտղն արևուն լուսոյն բանելովը հատուածակոդման բոլոր գեղեցիկ գոյները կը տեսնուին։ Ջայրը սպիտակ կը փայլի. քանի մը մասուկը վանականն պէս թափանցիկ են։

Լեռան ներքին կողմը մեծամեծ խոռոչներ կան, որոնք հրաշալի տեսարաններ կը ներկայացունեն ջահերու լուսով։

ՄԵՆԱՆՈՒՆ ՎԱԽՃԱՆԱՒՔ 1875 ԱՄԻՆ

Օտալիուս տ' Ալլուաց, պելճիքացի, գաղտնի գիտնականաց Նեսաորը։ Ծնաւ 16 փետրուարի 1783 և մեռաւ 15 յունուարի 1875։ Ամէնքն կհանդէս աշխատութիւն եղաւ, մեծ գործունէութիւն և մեծ ախորժ ունէր ուսման։ քաղաքագիտութիւնն ու գիտութիւնը գրեթէ թաժնեցին իր բովանդակ ժամանակը։ բայց ի մանաւանդ գիտութիւնն աւելի առանձնաշնորհութիւն ունեցաւ։ Բազմաթիւ գիտական գրուածներ ունի, և գլխաւորապէս երկրաբանութեան ընծայեց մեծաւ մասամբ իր կեանքը։ որով այն գիտութեան հիմնադրաց մէկը կը սեպուի արդարապէս։ Գլխաւոր գրուածքն է Տուբէտ Ծլիբօնոնիան, որ կը բովանդակէն աշխարհագրութիւն, մետալուրգութիւն, երկրագիտութիւն, մէտէորաբանութիւն և երկրաքանդութիւն։

Գոնսալոս, նշանաւոր գաստառբնաբնութեան Գաղղիոյ գաստական համալսարանաց մէջ։ Ծնաւ 14 մարտի 1834 և մեռաւ 23 փետրուարի 1875։

Սկսաւ երէց, Թոան երևելւոյն Մոնկոլֆիէի, մեռաւ ի 24 փետրուարի 1875 ամի ի հասակի 89 ամաց։ Երկար ժամանակ իր գրամբը նպաստեց գիտնական օրագրաց, որոնք մեծ ծառայութիւն մատուցին գիտութեանց յառաջադիմութեանը։ Բայց իրեն գլխաւոր արդիւնքն է հիւսիսային մեծամեծ գործադրութիւնքն արուեստից ու ճարտարութեանց մէջ։ Կանուխ սկսաւ իր

digitised by A.R.A.R.@

արուեստական ընթացքը ընկերակցութեամբ իրեն եղբարցը, և 1825 տարուընէն մասածից և չինչ տուաւ Գաղղիոյ մեծ երկաթուղին, Լիոնէն մինչև Սէնդ-Էթիէն։ Դարձեալ իրեն արդիւնքն են երկաթի թելէ կամուրջներն և ձեպընիացս տեղաշարժութիւնն։

Աղիելանտիր, գարուս գերմանոյն երևելի աստեղաբաշխներէն մէկը, մեռաւ 17 փետրուարի 1873։ Բնաբ. անուանի աստեղաբաշխն աշխերան էր, և Պոնի համաշարանին գասատու։ Աստեղագ ցուցակ ժ՛ոնի շատ նշանաւոր։

Կարոլոս Լաթել, մեր ժամանակացս ամենամեծ երկրաքաններէն մէկն, անգղիացի ազգաբ. մեռաւ ի Հասակի 78 ամաց։ մեծ և շատ արժանաւոր ազգեցութիւն ունեցաւ այս գիտութեան վրայ։ Իր գլխաւոր գրուածքն է Սկզբունք երկրաբանութեան, որ այլ և այլ լեզուով թարգմանուած է։

Մաթիւս, գաղղիացի աստեղաբաշխից Նեստորը, ծնաւ 25 նոյեմբերի 1783 և մեռաւ 5 մարտի 1875։ Աչքատ բայց բարեկիրթ ծնողաց զաւակ էր, իր ուշիմութիւնն ու եռանդուն գործունէութիւնը յաղթեցին ամէն գժուարութեանց և անխոնջ չանիւքը Գաղղիոյ ու աշխարհիս առաջին կարգի գիտնականներէն մէկն եղաւ։

Չ. Գ. Գալալլերի, լոմբարացի նշանաւոր բնաբան։

Բրեզոզ, գաղղիացի երեց, հիմնադիր ընկերութեան եղբարց Ս. Գրանիկեսոսի Պաւլոյեցւոց։ մեռաւ ի Շաւիլ ի հասակի 73 ամաց։

Ցովսէֆ Բերի, իտալացի նշանաւոր չափաբեր։

Ռոխօռոզ, գաղղիացի անուանի փորագրող։

Դաւըրոզ, գրապետ Բարիզու ազգային գրատան, և հեղինակ բազմաթիւ գրուածոց գաղղիական մատենագրութեան վրայ։

Լըցոռոի Ռուլին, գաղղիացի նշանաւոր ռամկավարական քաղաքագէտ։

Փ. Հուլնոռիր, գուբիցերացի բռնաբան, մեռաւ ի հասակի 76 ամաց ի Վիւրցեմգերկ։

Փ. Ժոպեր, գաղղիացի բառագրող և բուսաբան. մեռաւ ի հասակի 76 ամաց ի Մոնբելիէ։

Մոնցպալոն, գրապետ Լիանի գրատան, և պատմագիր հայրենի քաղաքին. մեռաւ ի հասակի 82 ամաց։

Ցովսէֆ Վալէնդինէլլի, անուանի գրագէտ և գրապետ գրատան Ս. Մարկոսի ի Վէնետիկ։

Տ՛ Ավրզազ, գաղղիացի հռչակաւոր աշխարհագիր։

Ալֆրէտ. Պոռկսրնէն, գրապետ ի Փլորէնտիա, և նշանաւոր վիպասան։

Լոռդ. Տէյռոյր, գերմանացի անուանի դերասան։

Պօլ. Ֆոշէ, բարիզական լրագրութեան վարժի հիմնադիրներէն մէկը, փեսայ Վ. Հիւկոյի։

Կ. Բաձի, իտալացի բազմագրքին ձուլիչ ապրուստի։

Դիշէնցորֆ, գերմանացի անուանի արձակագէտ, և բազմագրքին հրատարակիչ և քննադատ հին գրչագրաց Աստուածաշունչ գրոց։

Ամրոյզ Աճար, գաղղիացի անուանի վիպասան։

Պարոնեֆֆեր, բժիշկ նշանաւոր գնագէտ, անուանի և արիասիրտ Ճանապարհորդ, առաստաձիա մարդասիրտ։

Պէնըդ, երաժշտապետ ի Քէյմարիճ։

Մաքրոնեոս Պոռֆալինի, փլորէնտացի մեծանուն բժիշկ, մեռաւ ի հասակի 87 ամաց։

Տէր Պրոմպեր Կերնաներ, գաղղիացի Բենեդիկտեան աբբայ, նշանաւոր հնդեղեցական մատենագիր։

Փերդ. Հիդենկ, պատկէր անուանի քննադատ Ս. Գրոց։

Անձելինգ Բալլի Պարթալոմեի, նշանաւոր իտալացոյն քերթողահի և մատենագիր. մեռաւ ի Լիվոռնոյ։

Եդկար Քինէ, գաղղիացի երևելի ռամկավար մատենագիր և քաղաքագէտ։

Տիկին Անսըլոզ, գաղղիացի անուանի եղեր. երգակ մատենագիր։

Աբրահիր Հելեվի, անգղիացի նշանաւոր հրապարակագիր։

Գեորգ. Հերվինկ, գերմանացի հասարակապետական հռչակաւոր բանասէղծ։

Մ՛ռնել Լոռի, գաղղիացի բազմագիտն և անուանի տպագրապետ։

Տիմոթեոս Գիռոտ, գաղղիացի անուանի վիպասան, յայտնող և հնարող ժամանակիդ ամենատեսակ գաղտնագործութեանց։

Գոնշե, գաղղիացի բազմահմուտ հնախօս։

Հենրիխ. Էվալդ, գերմանացի նշանաւոր երբայեցագէտ. մեռաւ ի հասակի 72 ամաց։

Կաբոլ. Ռիմտոռզ, գաղղիացի երևելի փիլիսոփայ, քննադատ, և քաղաքագէտ։

Գոռնիկիէմ. Գոռըսէն, պրոտեսթացի հռչակաւոր բանասէր։

Անցերսէն, գանեցի անուանի վիպասան։

Կարոլ. Լոպելէն, լեհացի անուանի խմատասէր, քննադատ և հայրենասէր։

Պաւլինէ Վիկտոռեան, լեհացի վիպասանուհի, որ 80 հատոր հրատարակած է, ծննդեամբ գաղղիացի։

Լոռնժան Բոռթն, իտալացի հռչակաւոր վիրաբոյժ, գասատու ի Բաւիա։

Էգել, գերմանացի անուանի կիւրատան. գասատու բազդատական քերականութեան ի համալսարանին Պեռլինու, փոխանակ Պոբի, անոր մահուընէն ետև։

digitised by A.R.A.R.@